

# PEARLS OF ARMENIAN HERITAGE

## Անանիա Շիրակացի (շուրջ 7րդ դար)

Անանիա Եթաներորդ դարու մեր մատենագրության մէջ միակ ներկայացուցիչն է գիտութեան: Իր կեանքին մասին տեղեկութիւնները մեզի հասած են ինքնակենսագրական գրութեամբ. անօրինակ երեւոյթ մը այս՝ մեր պատմութեան մէջ, եւ հակառակ այս իրողութեան, անծանօթ են իր ծննդեան եւ մահուան թուականները: Պէտք է մեռած ըլլայ 700 թուականէն առաջ:

Ինքնակենսագրութիւնը առասպելական բնոյթ ունի, եւ կը ներկայացնէ ինքզինք որպէս գիտութեան ծարաւ անձ մը: Հետաքրքրական է Շիրակացիին տեղեկութիւնը, որուն համաձայն ինք չի բաւարարուիր Հայաստանի մէջ այդ ժամանակներուն ասանդուած երրեակ գիտութիւններով–քերականութիւն, հռետորութիւն, եւ տրամաբանութիւն: Այս բաժանմունքները կը կազմէին եօթնաստիճան Նուրբ գիտութիւններու ուսումնական ծրագիրին առաջին երեքը. բարձրագոյն քառեակը կազմուած էր համարողութիւն, երաժշտութիւն, երկրաչափութիւն, եւ աստղաբաշխութիւն բաժանմունքներէն, որոնք սորվելու համար՝ Անանիա կը մեկնի դէպի Կարին, ապա Բիզանդիոն եւ այդտեղ եւս չգտնելով քաջավարժ ուսուցիչ՝ կ'անցնի Տրապիզոն, Տիքիկոս անուն ուսուցչապետին աշակերտելու: Տիքիկոս գիտնականը նախապէս Հայաստան ապրած էր, ուստի նաեւ ծանօթ էր հայերէն լեզուին:

Ութ տարիներ Անանիա կ'ուսանի եւ կը հմտանայ համարողական եւ աստղաբաշխական գիտութիւններուն մէջ եւ կը դառնայ հայրենիք՝ վարդապետելու: Սակայն, իր վկայութեան համաձայն՝ “Մեր հայերը չեն սիրեր իմաստ կամ գիտութիւն, այլ ծոյլ են եւ ձանձրացող:”

Գլխաւոր գործն է **Աստեղագիտութիւնը**, որ ասելի քաղուածք մըն է քան ինքնատիպ գրուածք. կը խօսի երկնքի եւ անոր կազմութեան, արեւուն, լուսնի, ծիր կաթինին, կենդանակերպերուն վրայ, շատ մօտէն հետեւելով Բարսեղ Կեսարացի հայրապետին Վեցօրեայ արարչութեան մեկնութեան, ուսկից էջեր կը մէջբերէ, ասելցնելով ազգային զրոյցներ, ինչպէս յարգողի պատմութիւնը: Երկինքը կը բաժնէ եօթը գօտիներու՝ *այրեցանող, շարահիւսակ, մեծասիր, խառնարան, եթեր, գեղեցկական, խոնարի*: Գիրքին իններորդ գլուխը թարգմանութիւն է Պօղոս Աղեքսանդրացիի **Կենդանակերպերու** գրութեան:

**Երկնքի շրջագայութեան մասին** անունով գործը թարգմանութիւն է Արիստոտէլի “Աշխարհի մասին” գրութեան: **Ամպերու եւ նշաններու մասին** գրութիւնը եւս թարգմանութիւն պէտք է ըլլայ, որովհետեւ մէջը տեղեկութիւններ կան, որոնց Հայաստան կամ նոյնիսկ Տրապիզոն բնակող մէկը չէր կրնար ծանօթ ըլլալ: **Խնդիրներ եւ լուծումներ** գործով 24 թուաբանական խնդիրներ կը քննէ. այս գրութեան մէջ կան կարեւոր յիշատակութիւններ հայոց պատմական անձերու եւ աշխարհագրական տեղեկութիւններու մասին: **Կշիռներու եւ չափերու մասին** աշխատութիւնը կը հետեւի Եպիփան Կիպրացիին՝ տալով Սբ. Գրքին մէջ յիշուած կշիռներուն եւ չափերուն մասին բացատրութիւններ: Տոմարագիտական երկու գործեր եւս կ'ընծայուին Շիրակացիին՝ **Մեր Փրկչին Յայտնութեան մասին**, որով կը պաշտպանէ Յիսուսի Ծնունդն ու Յայտնութիւնը յունուար 6ին տօնելու հայոց սովորութիւնը, եւ **Տիրոջ Զատիկին մասին**, թէ՛ որ օրը պէտք է տօնել այդ:

(Քաղուած Հ. Կիրեղ Վրդ. Քիպարեանի “Պատմութիւն Հայ Գրականութեան” հատորէն)

